

ՅՈՎՆԱՆ ԱՐՔ. ՏԷՐՏԵՐԵԱՆ

Աբանչեղի Հոգևորականը՝

**ԳԱՐԵԳԻՆ
ՏՐԱՊԻԶՈՆՅԻ**

2020

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

	Էջ
Սքանչելի հոգեւորականը՝ Գարեգին Տրապիզոնցի	4
Հայ Տուն	6
Հայ Ծնողք	8
Հայ Ուսուցիչներ	10
Հայ Եկեղեցին	11
Հովիւներ	13
Հայ Մամուլ	15
Մամուլի Դերն ու Ազդեցութիւնը	17
Հայ Կազմակերպութիւններ	20
Հայ Ժողովուրդ	21
Երիտասարդութիւն	23

ՍՔԱՆՉԵԼԻ ՀՈԳԵԻՈՐԱԿԱՆԸ՝ ԳԱՐԵԳԻՆ ՏՐԱՊԻԶՈՆՑԻ

Սոյն համեստ աշխատությունը յանձն առինք պատրաստել համաճարակի օրերուն, երբ ի ձեռին ունեցանք թեմի անդրանիկ Առաջնորդ եւ այնուհետեւ Կ. Պոլսոյ Պատրիարք հոգեւոյս Տ. Գարեգին Տրապիզոնցի Արքեպիսկոպոսի 1932 թուականին հրապարակած «Տեղեկագիրը», որ վերնագրուած է նաեւ որպէս «Հրապարակային համարատուութիւն Առաջնորդական քառամեայ պաշտօնավարութեան, ծրագիր նոր շրջանի եւ հովուական քանի մը խօսքեր»:

Իոնարիումով ու հիացմունքով կարդացինք այն եւ ամեն վայրկեան զգացինք մեծ հոգեւորականին ներկայութիւնը, որուն խօսքերուն մէջ կ'ապրինք ներշնչող ու առաքինի հոգեւորականին տեսլականը: Այնպէս կը զգայինք, որ Տրապիզոնցին իր էութիւնը լեցուցած էր մեր հայրերու աղօթքներով ու աստուածային սիրոյ պատգամին կոչումովը:

Աշխատութիւնը ունի ինը ենթավերնագիր, որոնք կը ներկայացնեն Գարեգին Տրապիզոնցի Պատրիարքի «Հովուական քանի մը խօսքեր»ու վերնագիրը: Մերթ ընդ մերթ քաղումներ ենք կատարած եւ արձանագրած մեր համոզումները: Միաժամանակ կը միտինք վերահրապարակել իր Տեղեկագիրը ամբողջութեամբ, քանզի կարելի չէ ամփոփել հովուական գիրը: Իր մէջ ունի այնքա՛ն խորք, հաւատքի պարունակութիւն եւ եկեղեցւոյ առաքելութեան լայն մտահորիզոնի անչափելիութիւն: Անկասկած քանիցս պիտի վերընթերցենք Տեղեկագիրը, որպէսզի լիարժէք այնտեղէն քաղենք հիւրը աստուածսիրութեան, ապրուած հաւատքի զգացողութեան, անսահմանելիութիւնը հաստատող եկեղեցասիրութեան ոգին, հայու նկարագրին բնիկը փնտրող ոգին եւ դեռ շատն ու շատը, որոնք թաքնուած են տողերու ընդմէջ եւ

որոնք կարելի է դուրս բերել միայն աղօթքին ներթափանցող զօրութեամբ:

Տրապիզոնցի Պատրիարքը հրաւեր ու կոչ կ'ուղղէ մեզ՝ ապրելու համար տեսլապաշտ կեանքով, հաւատքով ուղեգծուած առաքելութեամբ, որպէսզի Հայց. Եկեղեցին շարունակէ ապրիլ որպէս յաւերժական ողնասիւնը մեր ազգին՝ Աստուծոյ ձեռամբ հաստատուած:

Ապրիլ, 2020

ՀԱՅ ՏՈՒՆ

«Ո՛վ Հայ Տուն, որ հայրենի երկրի յոյգերն ու յուզումները, յուշերն ու ներշնչումները, դարերու անջնջելի դրոշմը կրող հայեցի կենցաղին շունչն ու շնորհն ունի իրեն իբրեւ հիմնասիւն»:

«Գիտես ու կը գնահատես արժէքը այն ընտանեկան պատիւին, որ քուկդ է եղած, Աստուծոյ օրհնութեամբը սրբագործուած»:

«Հայ Տուն, անաղա՛րտ պահէ ինքնութիւնդ, հայրենի ու մայրենի երգիդ նկարագիրը»:

Տրապիզոնցի մեծանուն Պատրիարքի այս բառերը իրենց մէջ կը կրեն Հայ տունին քաղցրութեան ու սրբութեան տեսիլքը: Ճշմարտապէս սա է հայ եկեղեցւոյ եւ անոր սպասաւորին պատգամը իր զաւակներուն: Արդարեւ, երբ հայ տունը իր հոգեւոր սնունդը կ'առնէ Քրիստոսի Աւետարանէն, ապա այն ժամանակ կ'իրագործուի առաքելութիւնը հայ տունին եւ Տրապիզոնցի Պատրիարքի բառերով՝ հայ տունը կը վերածուի «Աստուծոյ օրհնութեամբը սրբագործուած» ներկայութիւնը մեր ազգի ու հայրենական կեանքին մէջ: Իւրաքանչիւր տուն, որ կը կազմուի երիտասարդ զոյգերու աստուածային սիրով, այն ժամանակ որպէս հայ տուն իր մէջ կը պահէ ու կը փայփայէ «հայրենի երկրի յոյգերն ու յուզումները, յուշերն ու ներշնչումները, դարերու անջնջելի դրոշմը կրող հայեցի կենցաղին շունչն ու շնորհը» իբրեւ հիմնասիւնը մեր սուրբ եկեղեցւոյ, ազգին ու հայրենիքին:

Պարտ ենք գնահատել այս մեծագոյն բարոյական արժէքը՝ հայ տունը, որ դարերով եղած է ընտանեկան պատիւը մեր նախնեաց: Այս գիտակցութեամբ պիտի ապրին նորապսակ զոյգերը եւ իրենց ուխտին կիզակէտը պիտի դարձնեն հայ տունը: Երիտասարդ զոյգեր իրենց տան հոգեւոր հացը պիտի դարձնեն Աստուածաշունչը, որպէս այն ժայռը, որուն վրայ հաս-

տատուած տունը կը մնայ անխախտ ու անսասան բոլոր տեսակի փորձութեանց դիմաց: Հաւատքով պիտի շաղախուի երիտասարդ գոյգերու կեանքի ճանապարհորդութիւնը: Նոր ժամանակներուն մէջ ապրող մարդկութիւնը երբեւէ չպիտի արհամարհէ Աստուծոյ ներկայութիւնը իր կեանքին մէջ եւ իր խոհերուն ու զգացումներուն առանցքը պիտի դարձնէ Աւետարանի ճառագայթող լոյսը, որուն մէջ է ամփոփուած ճշմարիտ խորհուրդը կեանքին: Եւ երբ հայ տունը հաստատուած է Աստուծոյ խօսքին վրայ, ապա ազգը իր կեանքով կը դառնայ ապրող եկեղեցին՝ ի գլուխ ունենալով Քրիստոս:

ՀԱՅ ԾՆՈՂՔ

«Հայ մայր եւ հայ հայր, Հայ Տան ճարտարապետներն ու ասանդապահները, տէր ու հաւատարի՛մ եղէք ձեր կոչումին: ... Ծնանիլ ֆիզիքական սովորական արարք մը չէ լոկ, ամուսնական անկշիռ լծակցութեամբ մը կատարուած: Ծնանիլը տալ մըն է: ... Ծնանիլ՝ կը նշանակէ կեանքի կոչել կամ վերածել այդ համբարուած ու թաքուն ձիրքերը կամ ոյժերը, նոր անհատ-մարդ մը կերտել եւ ընկեր-մարդ մը կազմել, զուգակցութեամբն այն ներգործոյթներուն (energy), որոնք աղբիւրներն ու յայտարարներն են ծնող մօր եւ հօր անհատական եւ ընկերային նկարագրին»:

«Ծնանիլ՝ կը նշանակի կեանքի կոչել ... նոր անհատ-մարդ մը կերտել»: Ուրեմն հայ ծնողքը իրենց սիրոյ ու նուիրումի կեանքով պիտի հրաշագործեն իրենց վստահուած առաքելութիւնը, որ կոչում է Աստուծմէ: Հայ ծնողքէն ծնած մանուկը պիտի դառնայ հայուն ինքնութիւնը իր մէջ փայփայող նոր մարդ-անհատը, որուն կեանքը պիտի գործէ անվերջանալի տեսիլքներով:

Պաշտելի են հայ ծնողները: Բայց ամէն առաւօտ արեւին լոյսին հետ բացուող կեանքը պիտի դառնայ պատգամաբերը Աստուծոյ խօսքին, որպէսզի իրմէ ծնած մանուկը ապրի Աստուծոյ իմաստութեամբ, քրիստոնէական հաւատքով, հայրենական տեսիլքով, ազգային շունչով, մարդասէր ոգով, ծառայութեան զգացողութեամբ:

Ծնողներ, դուք ճարտարապետն էք ձեր զաւակաց եւ քայլ առ քայլ պիտի առաջնորդէք անոնց կեանքը որպէս մշտարթուն ներկայացուցիչները Աստուծոյ:

Անընդհատ կարդացէք մեր եկեղեցւոյ սուրբերուն պատգամները, որոնք աղօթք ու լոյս են ձեր կեանքի ճանապարհին: Ձեր մէջ են Աստուծոյ շնորհները, ուստի կեանքի կոչէք այդ շնորհները:

Երբ խօսքը կը վերաբերի ծնողներուն, որպէս հոգիի ճարտարապետներ, որոնց Աստուած պարգեւած է զաւակներ, Գարեգին Տրապիզոնցի Պատրիարքը հրաշալի պատգամներ կը յղէ բոլոր ժամանակներու համար անհրաժեշտ: Պիտի ուզէինք կատարել նաեւ այն հաստատումը, որ մեզի ուղղուած բառերը զգաստացնող են.

«...Մարդը ապրեցուցէ՛ք ու մշակեցէ՛ք միշտ ձեր մէջը, որպէսզի զաւակը, որ պիտի ծնիք ու որ պիտի կրէ ձեր նմանութիւնը, ըլլայ իսկապէս աստուածային մանուկ մը»:

Որոշապէս ընդգծուած է հեղինակի մօր առանցքային նշանակութիւնը բարոյականութեան, եւ թեպէտ այդ կը սպասուի ծնողներէն, որպէս պատասխանատուները մանուկի կեանքին մէջ. *«Դուք պիտի դաստիարակէք հոգին ձեր սրտահատորին, սիրտը ձեր հոգեհատորին, այն աւանդական առաքինութիւններով, որոնք կը բնորոշեն մարդկայնական պրիսմակէն անցած հայեցի նկարագիրը»:*

Յուսալից ենք, որ մեկուսացումի այս օրերուն ծնողները աղօթքի առաջնորդութեամբ իրենց հոգիին մինչեւ խորքը իջնելով, դէմ յանդիման Աստուծոյ նորոգեցին իրենց ծնողական սուրբ ու նուիրական կոչումը:

ՀԱՅ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐ

«Ձեզ պաշտօն յանձնարարուած է հայ լեզուն ուսուցանելու հայ-ամերիկացի տղոց: Դժուար աշխատանք արդարեւ: Եւ այդ դժուարութիւնը կը դառնայ աւելի քարոյ, եթէ ըսենք – դուք կոչուած էք տղոց ներարկելու հայեցի շունչ: ... Ծնողներէն վերջ ձեր պարտքն է ձեր դէմ սպառազինուած բոլոր դժուարութեանց հանդէպ նահատակի կուրծք յարդարելու: Ո՛չ թէ արիւնի, այլ քրտինքի նահատակի մասին է խօսքս...»:

Երբ այս տողերը կը կարդայի, մտաբերեցի Լորտ Պայրընի խօսքերը. Աստուծոյ հետ խօսելու լեզուն հայերէնն է»:

Հայ ուսուցիչներ, ահաւասիկ այս հոգին հաղորդող առաքեալներն էք դուք: Այսօր, աւելի քան բոլոր ժամանակները, ձեզի է վստահուած հայերէնը ուսուցանելու առանձնաշնորհը: «Դուք կոչուած էք տղոց ներարկելու հայեցի շունչ»:

Կ'ապրինք նոր աշխարհի մը մէջ եւ նոր մարտահրաւերներու առաջ: Մեր նշանաբանը պիտի ըլլայ յաղթել եւ մեր երթը շարունակել դէպի յաւերժութիւն: Մեզի կը մնայ վերասեփականել մեր սրբութիւնները: Հայերէնը մեր արեան կանչն է: Ինչքան հայ ուսուցիչն է հայերէնը ուսանող դաստիարակը, նոյնքան ծնողներու եւ բոլորիս պարտքն է հնչելի դարձնել հայերէնը: Պիտի սիրել ու խօսիլ հայերէն, որպէսզի զգանք կոչումը հայ լինելութեան:

Հայ ուսուցիչը միայն լեզու՝ հայերէնը ուսուցանող անձը չէ, այլեւ բառին լման առումով ծնող է ու դաստիարակ: Ծնող է, որովհետեւ դպրոցէն ներս իրեն է վստահուած աշակերտին վերակացութիւնը, եւ դաստիարակ, որպէսզի աշակերտին միտքը լեցնէ գիտելիքներով: Իսկ Գարեգին Տրապիզոնցի Պատրիարքը հայ պատանիին ուսումնառութեանը մէջ դերակատարութիւն ունեցող հայ ուսուցչին կը յանձնարարէ դիմել հայ եկեղեցիին, որպէս աղբիւրը մեր բոլոր արժէքներուն:

ՀԱՅ ԵԿԵՂԵՑԻՆ

«Հայց. եկեղեցին յայտարարն է հայ հոգիին»: ... Հաւատքի մը՝ նախաքրիստոնէական եւ ապա քրիստոնէական, ապրումներ՝ աւանդական եւ պատմական, ներշնչումներ՝ հին ու նոր արուեստի ու դարձեալ, աշխարհայեացքներ երեկի եւ այսօրի իմաստասիրութեան՝ անհատական, ընտանեկան եւ ընկերային կեանքի վերաբերմամբ, - ահա քառեակ՝ այլ բազմաճառագայթ դէմքը հայ հոգիին»:

Խօսիլ Հայց. եկեղեցիի մասին կարելի չէ առանց սերտելու նոյնինքն հայ եկեղեցւոյ պատմութիւնն ու զգալու առաքելութիւնը աստուածահիմն մեր սրբազան հաստատութեան: Աստուած Ինքն է իջած Երկինքէն ու հիմը դրած մեր սուրբ եկեղեցւոյ: Ինչքա՛ն ճշմարիտ է Տրապիզոնցի Պատրիարքին պատգամը. «Հայց. եկեղեցին յայտարարն է հայ հոգիին»: Ուրեմն հայ ըլլալու համար նախապայման է վերածնած ըլլալը եկեղեցւոյ աւագանէն ու դրոշմուած սրբալոյս միւռոնով:

Հայց. եկեղեցին մեծագոյն հրաշքն է մեր ազգի կեանքին մէջ, որուն ներկայութիւնը կամուրջն է անցեալի պատմութեան եւ դէպի յաւերժութիւն տանող ճանապարհին: Մեր սուրբ եկեղեցին խորանն է նոր կեանքի ի Քրիստոս: Այսօր, մեր ժողովուրդի զաւակունք իրենց հոգու հայեացքը սեւեռուն պիտի պահեն դէպի սուրբ եկեղեցին ու անոր պատկերին մէջ պիտի հաստանեն իրենց կեանքը՝ աղօթքով ու հաւատքի բարի գործերով:

Հայց. եկեղեցւոյ առաքելութեանը նուիրուած բազում խորհրդածութիւններ ունինք, որոնք կ'արտայայտեն մեր հաւատամքն ու համոզմունքը, թէ ինչպիսին է դերն ու առաքելութիւնը Հայց. եկեղեցւոյ մեր կեանքին մէջ ի մասնաւորի այս օրերուն: Այստեղ կ'ուզենք մէջբերել մի քանիսը միայն.

Հայց. Առաքելական եկեղեցին իր հոգեւոր ուժականութիւնը կ'առնէ Քրիստոսի լոյս Աւետարանէն ու այնուհետեւ կը նորոգէ իր հաւատացեալներուն կեանքը քրիստոսաբոյր պատգամներով:

Հայց. եկեղեցին ծնունդ առաւ Քրիստոսի լոյսի ճառագայթումով, եւ այդ նոյն կենարար լոյսը հայ ժողովուրդին պարգեւեց հերոսական մեր մարտնչումներուն նշանաբանը՝ «Վասն հաւատոյ, վասն հայրենեաց»:

Մենք, որպէս ճշմարիտ անդամներ քրիստոնէական եկեղեցւոյ, ունինք մեր առաքելութիւնը, այն է՝ պահել ու պահպանել Հայց. Առաքելական Սուրբ եկեղեցին որպէս մեր հոգեւոր ու բարոյական արժեքներու օճախը:

Հայց. եկեղեցին քրիստոնէական եկեղեցիներու մեծ ընտանիքին մաս կը կազմէ՝ ամուր պահելով հանդերձ իր ազգային նկարագիրը, որուն իբր հետեւանք շաղախուած է իր ժողովուրդին հետ, անբաժան է մնացած իր ժողովուրդէն, երբ Հայց. եկեղեցի կ'ըսենք, մենք կը հասկնանք նոյնինքն հայ ժողովուրդը:

Ակունքն է հայ եկեղեցին հայ հոգեւոր, բարոյական ու մշակութային բոլոր նուաճումներուն:

ՀՈՎԻՒՆԵՐ

Տրապիզոնցի Պատրիարքին՝ հովիւներուն ուղղուած խօսքը ոչ միայն պետք է առնչուած մնայ իր ժամանակի հովիւներուն, այլեւ այսօր եւ բոլոր ժամանակներու հովիւներուն ուղղեալ պատգամ մը: Իւրաքանչիւր տող ու բառ զգաստութեան հրաւեր մըն է, որպէսզի հովիւը մնայ իր կերպարին մէջ եւ զերծ մնայ իր կոչումին անյարիւր գործունէութենէն: Ան իր խօսքի սկզբնաւորութեան կը մեջբերէ Ծնորհալի Հայրապետի «Թուղթ ընդհանրական»էն հատուած մը, որն ինքնին կը լուսաւորէ մեր միտքն ու հոգին.

«Ծաներու՛ք եւ զայս, զի կոչումն անուան քահանայութեանդ ձերոյ ո՛չ է ի մարդկանէ եւ ո՛չ ի ձեռն մարդոյ, այլ յայնմանէ, որ կոչեցաւ քահանայ ըստ կարգին Մելքիսեդեկի, որ եւ ինքն է ճշմարիտ քահանայ եւ քահանայապետ եւ պատարագ Աստուծոյ Հօր»:

Իր խօսքը շարունակելով՝ ան հովիւները կը ներկայացնէ կամ կը համեմատէ ծնողներուն, որոնք ոչ միայն մէկ ընտանիքի պարտականութիւնն ունին, այլեւ բազմաթիւ տուններու:

«Դէտ» մըն էք, ոչ թէ վարձուած մարդոց կողմէ, այլ՝ կոչուած Աստուծմէ: «Հայր եւ ծնող» էք, արդարեւ ո՛չ թէ միակ ընտանիքի մը, հապա տուններու, որոնց պիտի մատակարարէք ոչ թէ «կորստական կերակուրը», այլ «երկնքի ճշմարիտ հացը»՝ «որ կեանք կու տայ աշխարհին»:

Տրապիզոնցի Պատրիարքին հովիւներուն ուղղեալ պատգամը իւրաքանչիւր հոգեւորականի հոգիին օծում կը պարգեւէ: Հիացումով կ'ընթերցենք իր պատգամը եւ մեր հոգիին մինչեւ խորքը կը զգանք Աստուծմէ մեզի շնորհուած եւ վստահուած քահանայական կոչումին ծանրաշիռ ըլլալու հանգամանքը.

«Դուք օծութիւն ունիք սուրբերէն», ամուր եւ միշտ բռնեցէ՛ք այդ կշիռը ձեր օծեալ ափերուն մէջ, ինչպէս

անջինջ արդարութեան դրոշմը ձեր միտոնօծ ճակատին վրայ...:

Եւ գիտէք դուք, թէ ինչ է ամփոփոյքը ձեր կոչումի բովանդակ պարտականութեան – ՆՈՒԻՐՈՒՄ:

Մեր խնդրանքն է, որ ամէն հայ հոգեւորական կարդայ Տրապիզոնցի Պատրիարքին՝ հովիւներուն ուղղեալ գրութիւնը եւ ունենայ աղօթքի ու խոկումի առանձնակի պահ մը Աստուծոյ ներկայութեան:

Մենք անձնապէս քանիցս ընթերցեցինք այն եւ մի քանի տարբեր տեղերու մէջ գրեթէ ամբողջութեանը մէջ պիտի ներառենք մեր գրութեանց մէջ, որպէս չափազանց այժմեական եւ իր մօտեցումով հայրական խրատական մը: Այն ընթերցելէ յետոյ կ'զգանք, որ իրօք քահանայութիւնը, որն իրօք կոչում մըն է Աստուծմէ մեզի տրուած եւ միաժամանակ առանձնաշնորհում մը:

ՀԱՅ ՄԱՄՈՒԼ

Գարեգին Տրապիզոնցի Պատրիարքին՝ հայ մամուլին ուղղեալ այս խօսքը գուցէ առաջինն է իր հրապարակագրութեան մէջ: Անելի ուշ Կ. Պոլսոյ պատրիարք ընտրուելէ յետոյ ան եւս կը հրապարակէ նոր պատգամ մը՝ ուղղեալ հայ մամուլին եւ անոր կատարելիք դերի մասին: Մեծ Պատրիարքին բառերը կարդալէ յետոյ, զորս եւ կ'ուզենք ներկայացնել ընթերցողին, յիշաւի կ'ըմբռնենք, որ այսօրուայ թերթը առհասարակ շատ հեռու է իրեն վստահուած դերակատարութենէն, ըլլայ Հայաստան եւ արտաշխարհ եւ ընդհանրապէս բոլոր հասարակարգերու մէջ: Բնական է, հայ մամուլի պատմութեան մէջ կան թերթեր, որոնք կը մնան ադամանդի պէս փայլուն իրենց դերակատարութեամբ: Դժբախտաբար, այսօր կան մարդիկ, որոնք իրենց չարանենգ վարքով կը վարկաբեկեն հայ մամուլին անունը եւ արժանի չեն անգամ աղբամանը նետուելու, որպէսզի «վարակ» չտարածեն:

Արժէ կարդալ ամբողջութիւնը մամուլին նուիրուած մտածումներուն ու խոհերուն: Հազար ափսոս, որ այսօրուայ աշխարհի կեանքին անդորրը խանգարած է մամուլը իր ամենալայն իմաստով: Փոխանակ դառնալու փարոսը լոյսին ու բարութեան ճառագայթները տարածելու, ան դարձած է կործանարար: Բնական է՝ մեր գնահատականը երբեք չենք զլանար ուղղելու բոլոր անոնց, ովքեր մամուլի վարկը կ'ապահովեն իրենց առաքելութեան մէջ բարձրագոյնը արձանագրելով եւ անով իսկ մատնացոյց ընելու բարոյական իրաւունքը կ'ունենան ցոյց տալու չարը եւ անընդունելին:

Ստորեւ կը ներկայացնենք մի քանի հատուածներ Գարեգին Պատրիարքի տեսլականէն.

«Ինչ կը սպասենք մեր մամուլէն: Շատ պարզ բաներ.- ահա ամփոփ Տասնաբանեայ մը, որ սակայն ոչ

*Մինայէն իջած է, ո՛չ ալ որոտումներով եւ շանթերով
դարձնուած.*

1. Առաջնորդել եւ ոչ թէ առաջնորդուիլ:

2. Շինել եւ ոչ թէ քանդել:

3. Ուղղել եւ ոչ թէ ծռել:

4. Լուսաւորել եւ ոչ թէ խաւարացնել:

*5. Տալ օրինակ իրերահասկացողութեան, մամուլի
աշխատողներու համերաշխ գիտակցութեամբը ազգա-
պահպանման աւագ – եթէ ոչ միակ – դերին մէջ:*

*6. Գնահատանքները չվրիպեցնել իրենց նպատա-
կէն ապարարողականացնող գովեստներու շոայլանքով:*

*7. Գործնապաշտութեան (business) ոգին ստո-
րադասել գաղափարապաշտութեան ոգիին:*

*8. Իրերաքննադատութիւնը հեղինակաւորել ինք-
նաքննադատութեան արիութեամբ:*

9. Ըլլալ կարգապահ՝ ըլլալու համար զօրաւոր:

*10. Ծառայել՝ առանց փոխադարձութեան սկն-
կալութեան:*

Այստեղ կ'ուզենք որպէս յաւելում ներկայացնել
մեր մտածումները՝ նուիրուած հայ մամուլին, հիմք
ունենալով Գարեգին Տրապիգոնցի Պատրիարքի մէկ
այլ խօսքը՝ արտասանուած Կ. Պոլսոյ Պատրիարք ընտ-
րութեան տարիներուն: Ներքոյ յիշեալ գրութիւնը հրա-
պարակած ենք մեր «Փունջ մը քարոզներու» ԺԳ հատո-
րի մէջ, զորս նոյնութեամբ կը հրապարակենք:

ՄԱՍՈՒԼԻ ԴԵՐՆ ՈՒ ԱԶԴԵՑՈՒԹԻՒՆԸ

Երկար ժամանակ է ի վեր կը մտածեի թե ի՞նչ պետք է հաղորդել հանրության եւ յատկապէս մամուլի պատասխանատուներուն, բացատրելու համար մամուլի դերն ու ազդեցութիւնը: Նոյն այս օրերուն ձեռքս անցաւ Պոլսոյ Պատրիարքարանէն լոյս ընծայուած սքանչելի հրատարակութիւն մը, որ տիտղոսագրուած է «Անդրանիկ կոնդակներ – Սահմանադրականի Շրջանի Պատրիարքներու», աշխատասիրութեամբ Վաղարշակ Սրկ. Մերովբեանի: Հատորին մէջ լոյս ընծայուած Անդրանիկ կոնդակները հրաշալիօրէն կ'ուղեգծեն հայ քրիստոնեայէն սպասուած կեանքի ճանապարհը ամենալայնօրէն ըմբռնուած: Այս գրութեամբ կ'ուզենք ի մասնաւորի հայ մարդուն ուշադրութեանը յանձնել 1951 թուականին հրապարակուած Գարեգին Տրապիզոնցի (Խաչատուրեան) Պատրիարքի Անդրանիկ կոնդակին մէջ տեղ գտած այն հատուածը, որ կը բացատրէ թե ո՞րն է մամուլին դերն ու ազդեցութիւնը: Չենք ուզեր որեւէ մեկնաբանութիւն կատարել եւ բաւարարուիլ այսքանը ըսելով միայն՝ որ հայ մամուլը ներկայացնող իւրաքանչիւր անհատի համար օգտաշատ գրութիւն է սա, որ հիմնական ուղղութիւն կը ներշնչէ բոլոր այն մարդկանց համար, որոնք պարտ են մամուլը դարձնելու սերունդներ դաստիարակելու բարի միջոցին: Հայ մամուլի ընտանիքին մէջ ունինք թերթեր, որոնք կը պատկանին ժողովուրդին, որովհետեւ մինչեւ իսկ իրենց արձանագրած բառերուն բարի պատասխանատուութեամբ:

Ստորեւ կարդալ Գարեգին Տրապիզոնց Պատրիարքի խօսքը.

«Մենք խօսք ունինք սրտագին նաեւ մեր մամուլին: Ճրագ մ'ալ ինքն է, լուսաւորելու այն ճամբան՝ ուսկից պարտի քալել ամէն ոք: Իւրը նուազ եւ պատրոյգը անբաւական ճրագին լոյսը պիտի ըլլայ աղօտ եւ պիտի

խաւարի իսկ: Հասարակ լուրերը, յաճախ գիտակցօրէն թէ անգիտակցաբար խեղաթիւրուած եւ գլխիվայր շրջուած, կը պարպեն լոյսը ճրագին եւ բերելով խաւարը՝ կը թողուն որ անոր նայողներ խարխալեն անորոշութեան մէջ եւ մոլորին: Քննութիւնն ու քննադատութիւնը, որոնք մամուլին կոչումէն բխած առաձնաշնորհներ պարտին ըլլալ, կը կորսնցնեն իրենց արժէքն ու իրաւունքը, ինչպէս նաեւ ազդեցութիւնն ի բարին եւ ի ճշմարիտը, երբ չեն ներշնչուած թափանցուած բուն իրողութիւններէն, այլ առաջնորդուած են երեւակայութիւններէ, կանխակալ կարծիքներէ, սեւեռամտածումներէ եւ մերթալ անխոստովանելի նկատումներէ: Ասոնք ոչ միայն չեն շիներ, այլ եւ կը քանդեն: Կը տեսնուին գրիչներ, որոնք չեն խղճահարիր սուտն իսկ կաղապարել փորձելէ ամենօրեայ վարկաբեկումներու մէջ այս կամ այն հասցէին, հասարակական կեանքը վրդովելով եւ ընկերային չարիքներու լայն դուռ բանալով: Ահաւոր է մամուլի պատասխանատուութիւնը, երբ գրիչը կը սանձարձակէ՝ մոլեգին հովի մը նման յարձակելու այս ու այն կողմ եւ բարոյական աւերներ գործելու:

Մենք ցաւով կը դիտենք այս տխուր երեւոյթը գրեթէ ամէն շրջաններու մէջ եւ մեր սիրտը կ'արիւնտօի: Թեւ «խթանի դէմ աքացելու» բոլոր փորձերը ի վերջոյ կը գտնեն իրենց արդար վախճանը, բայց կը խոցեն պահ մը դիտողներուն եւ տեսնողներուն խղճմտանքը իր մաքրութեան մէջ:

Մամուլը, որ կոչուած է մատակարարելու լոյս եւ հոգեկան սնունդ, պարտի գիտակցիլ եւ անաչառ, անշահախնդիր եւ անկողմնակալ դատողութեամբ ծառայել այդ ազնուական կոչումին: Միտք, լեզու, գրիչ՝ այդ կոչումէն պարտին քաղել իրենց ներշնչումները, առաջինը՝ իր հասունութեամբ, երկրորդը՝ իր մաքրութեամբ եւ երրորդը՝ իր պատկառազդու լրջութեամբ: Երգիծանքն անգամ ունի իր շնորհը, որ իր ջերմիկ շունչը՝ կառնէ բարիին կամեցողութենէն, զգուշանալով միանգամայն ծիծաղելիութիւններէ: Արդարեւ, ինչ տգեղ եւ ողորմելի է

այն երգիծանքը, երբ պարպուած է ոգիէ եւ բովանդակութենէ:

Կոչ կ'ընենք, սրտցաւորէն մեր մամուլի ծառայողներուն, որ ունենան պահանջելի զգուշաւորութիւն՝ չարձակելու սանձը քանդիչ Չարին, որպէսզի Բարին կատարէ իր շինարար ու շնորհաբեր դերը՝ ըղձալի խաղաղութեան մէջ: Մեր ժողովուրդը այդ բանին պէտք ունի:

Նոյն ատեն կը յորդորենք մեր սիրելի ժողովուրդն ալ ըլլալ արթուն՝ ընտրելու միշտ խաղաղութեան եւ շինութեան ապահով ճամբան, որ Աւետարանի լոյսով ցոյց կը տրուի իրեն, չազդուելով խափանարար իրադարձութիւններէն, եւ կարեկից իսկ ըլլալով անոնց հեղինակներուն հանդէպ: Աւետարանի լոյսը՝ ճշմարտութեան լոյսն է. Աստուծոյ լոյսն է: Աստուած իսկ է: Առաջնորդուիլ հարկ է այդ լոյսով: «Մի ոք զձեզ խաբեսցէ բանիւք սնտուովք, զի վասն այսորիկ իսկ գայ բարկութիւն Աստուծոյ ի վերայ որդւոցն անհաւանութեան: Մի այսուհետեւ լինիք բաժանորդք նոցա...: Իբրեւ զորդիս լուսոյ գնացէք: Զի պտուղ լուսոյ բարութեամբ եւ արդարութեամբ եւ ճշմարտութեամբ» (Եփես. Ե. 6-9): Առաքեալի խօսքերն են ասոնք՝ զորս կը յիշեցնեն մեր եկեղեցւոյ բոլոր զաւակներուն անխտիր, բոլոր անոնց՝ որոնք իբրեւ «լոյսի որդիներ», լոյսի զէնքն են հագած (Ա.Թեսաղ. Ե.5 եւ Հռովմ. ԺԳ. 12)»:

Մամուլի առաքելութիւնն է դառնալ լոյսն ու օրինութիւնը հասարակական կեանքին մէջ:

Հոկտեմբեր 4, 2015

Գարեգին Տրապիզոնցի Պատրիարքի հայ կազմակերպութեանց նուիրուած խորհրդածութիւնները իրօք խիստ տպաւորիչ են եւ առաջնորդող նաեւ այսօրուան համար: Բնական է՝ ժամանակի իրավիճակին համապատասխան խրատական է յղուած, բայց միաժամանակ իր խօսքը նոյնքան այժմեական է: Այստեղ կը մէջբերենք հատուած մը միայն, ուր ընդգծուած է իր հաշտարար ոգին, խաղաղասիրութեան դերն ու համագործակցութեան կոչը.

«Իրաւունք չունի՞նք սպասելու, որ մեր կազմակերպութիւնները, յարանուանական թէ կուսակցական, կրօնական թէ քաղաքական, բարեսիրական թէ հայրենակցական, այս սկզբունքով գործէին իւրաքանչիւրն ինքն իր մէջ, եւ համագործակցէին նոյնատեսակները իրարու հետ: Մայր-եկեղեցի եւ յարանուանութիւններ, բարեսիրական եւ հայրենակցական միութիւններ, քաղաքական կուսակցութիւններ, իրենց բոլոր ճիւղաւորումներովը, գտնէին մագնիսական քեւեռակէտ մը այն բազմաչարչար մարմինին մէջ, որ կը կոչուի ժողովուրդ կամ ԱԶԳ: Բոլորը ժողովուրդին համար եւ ի դէպ ժողովուրդ, հոգ չէ, թէ այլազան՝ բայց գիրար խափանող ուղիներով: Առանձին՝ այլ զուգահեռական գիծեր, որոնց վրայէն ազգային կեանքի անիւները կարենան անսայթաք առաջնորդել մեր ժողովուրդը դէպի որոշ նպատակակէտ»:

Հայ կազմակերպութիւններուն նուիրուած իր խօսքին մէջ որոշ է, որ հայրենիքն ու եկեղեցին իր հաւատքի գաղափարախօսութեան կիզակէտն են: Որոշապէս ան տեսած է գալիք ժամանակները եւ տեսակէտով մը մարգարեացած է գալիքի մասին՝ տեսնելով ու հասկնալով ճշմարիտ դերն ու տեղը հայրենիքին, մանաւանդ Մայր եկեղեցիին, որպէս մագնիսը հայրենիքն ու Սփիւռքը կամրջող:

ՀԱՅ ԺՈՂՈՎՈՒՐԴ

Երբ այս համեստ աշխատությունը յանձն առինք, մեր աչքի առաջ կ'ընթերցենք Տրապիզոնցիի հետեւեալ բառերը, որոնք կ'ուրուագծեն նկարագիրը մեր ազգին.

«Հայ ազգը, մահու եւ կենաց ամենէն դժնդակ փորձութիւններէն անցած, չէ կորսնցուցած երբէք հոգիի արիութիւնն ու մտքի իմաստութիւնը՝ հաւասարակշռելու իր ոյժերը եւ պահպանելու իր կորովը: Բիւրերու բիւր զոհեր իւլած են իրմէ անանուն Ոճիրն ու Եղեռնը, բայց իր Հաւատքը վաղուան համար եւ իր Կամքը՝ կուրծք տալու ներկայի ու գալիք բոլոր փոթորիկներուն դէմ, մնացած են անաղարտ ու անպարտելի»:

Իր ժողովուրդին ուղղեալ իր պատգամին մէջ ան կը խօսի հաւատքի դերակատարութեան մասին.

«Հաւատքը վաղուան, հաւատքը ընկերային եւ տնտեսական հաւասարակշռութեան վերահաստատման.- սահկա չի գար ինքնաբերաբար, չի գար զանգատներով եւ ողբ ու կոծերով, այլ կու գայ ոգեկոչելով ինչ որ կայ մեր մէջ իբրեւ հոգեկան արժէքներու ժառանգութիւններ եւ աւելցնելով նոր արժէքներ»:

Արդարեւ, հաւատքը մայրն է ճշմարիտ գաղափարախօսութեան եւ բարոյական սկզբունքներու: Հաւատքէն պարպուած անձը կամ հաւաքականութիւնը դատապարտուած է յաւետ կորչելու: Ինչպիսի սահմանումներ կարելի է տալ հաւատքի գիտակցութեան եւ զգացողութեան: Երբ կը խօսի հաւատքի մասին, ան կը կատարէ հետեւեալ սահմանումը.

«Այդ հաւատքը քեզի տուող ընտանի լուսադրիւր մը կայ, այդ՝ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԵԿԵՂԵՑԻՆ Է, զոր կը կոչենք «ԱՍՏՈՒԾՈՅ ՏՈՒՆ»: Աստուծոյ ճշմարիտ տունը այն բարոյական մթնոլորտն է, ուր հոգին կը գտնէ իր ինքնութեան լման ճանաչումը, շնորհիւ ճշմարտութեան այն լոյսին, որ Աւետարանէն կը ճառագայթէ, աւելի ճիշտ՝ որ Քրիստոսի երկրաւոր կամ մարդկային փորձառու-

թիւններէն, ապրած կեանքէն կ'արտափայլի: Այդ մթնոլորտը ունի իր արտաքին պարունակը, որ եկեղեցիի շէնքն է կամ Տաճարը: Բայց այս տաճարը կ'ենթադրէ երկու այլ տաճարներ ալ, առանց որոնց ինքը կը դադրի իսկապէս գոյութիւն ունենալէ – ԱՆՁ-ը եւ ՏՈՒՆ-ը»:

Իր խօսքին մէջ ան կը բարոյախօսէ հետեւեալ բառերով. «Տիպար հասարակարգ մը տիպար մարդկութեամբ»: Իր տեսիլքն է եղած, որպէս Առաջնորդը այն ժամանակուայ Գալիֆորնիոյ, իր ժողովուրդին մէջ գտնել տիպարն ու օրինակելին դեռեւս իր սաղմնային վիճակին մէջ եղած օրերուն, Տրապիզոնցին կ'ուզէ թրծել բացառիկ ոգեկանութեամբ հասարակարգ մը, տիպար ու օրինակելի անձերով: Այստեղ կ'ընդգծուի նաեւ անոր ազնուահոգի անձը եւ տեսլապաշտ հոգեւորականի կերպարը:

ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅՈՒՆ

Հիացմունքով կ'ընթերցենք երիտասարդության նուիրում իր խօսքերը, որոնց մէջ է ամփոփուած մեծ հոգեւորականին ամբարուած իմաստութիւնը եւ կեանքի նկատմամբ փիլիսոփայութիւնը:

«Իմաստութիւն մը կայ, որ ծերության անունով պատուուած է նոյնիսկ երիտասարդության մէջ: Կեանքին փորձառութիւնները կը շինեն կամ կը զօրացնեն այդ իմաստութիւնը»:

Հայ երիտասարդութեանը ուղղուած իր ոգեշունչ պատգամով Գարեգին Պատրիարք մեզի հետ կը բաժնէ իր տեսլականը.

«Միրելի երիտասարդներ, կ'ապրինք երկրի մը մէջ, ուր ստեղծագործ ու շինարար միտքը ամենէն աւելի կը ջանայ ու կը յաջողի օժտել կեանքը նոր հրաշալիքներու յայտնութիւններով: Նոր քաղաքակրթության մը հիմնարկէք կը կատարուի, համագործակցութեամբը այլազան ցեղերու, որոնք իրենց արժէքաւոր ժառանգութիւնները կը բերեն ի սպաս այս հսկայ աշխատանքին: Ինչ որ ամենէն աւելի աչքի կը զարնէ իբրեւ երաշխաւորութիւնը մեծագոյն յաջողութեանց, ատիկա ձեռներէցութեան ոգին է. ֆիզիքական եւ բարոյական ոյժերու, ներգործոյթներու խառնուրդ մը եւ խտացում մը, որ մագնիսական զօրութեամբ մը կը շարժէ երկրին բոլոր ձեռքերն ու միտքերը: Ոյժերու այս համադրոյթը ծնած է Մեքանան: Եւ մեքանական դարը հո՛ւս է, որ առաւելագոյն չափով տիրապետած է կեանքին, կլանած է զայն: Ամերիկան ամբողջ հսկայ մեքենականութիւն մըն է: Եւ մարդը իր ուղեղով ու բազուկով կը դարձնէ այդ մեքենան: Մարդը մեքենայի գերին է»:

Մեր հովուական կեանքի ընթացքին մենք բազում առիթներով մեր սրտի խօսքն ու հաւատամքն ենք յղած երիտասարդության: Միշտ քաջալեր ենք հանդիսացած երիտասարդութեան՝ իրենց մէջ տեսնելով եւ՝

հաւատքի, եւ՝ աստուածային շնորհները եւ անկեղծօրէն սիրած ենք երիտասարդները եւ խոնարհած իրենց իմաստութեան առջեւ: Ահաւասիկ քառասուն տարիներ հոգեւոր ծառայութեան մը ճանապարհին ենք եւ փառք Աստուծոյ, երբեւէ մեր մէջ չէ տկարացած տեսիլքը հայ երիտասարդութեան նկատմամբ: Բոլորովին անհարկի կը գտնենք կրկնել մեր մտքերը եւ գաղափարականը: Կ'ուզենք բաւարարուիլ մի քանի խորհուրդներ եւս բաժնելով ընթերցողին հետ՝ մէջբերում կատարելով Գարեգին Տրապիզոնցի Պատրիարքի պատգամէն.

«Ծառայութիւն, նուիրում - ահա թագն ու պսակը, այլ նաեւ շարժիչն ու կանոնադրիչ բարոյական ոյժը ձեր բոլոր հաճոյքներուն ու վայելքներուն: Հոն է արժէքը կեանքին»:

Երիտասարդութեան ուղղուած իր պատգամին աւարտին պատրիարքը իր մտածումները կը կենդրոնացնէ նաեւ քաղաքացիութեան վրայ եւ կը խօսի քաղաքացիէ մը սպասուած պարտականութեանց մասին.

«Քաղաքացի մը ենթակայ է այն բոլոր օրէնքներուն, որոնք կ'երաշխաւորեն Հայրենիքին ամբողջութիւնը, խաղաղութիւնը, անկախութիւնը, բարգաւաճումն ու բարօրութիւնը: Ազատութիւնը, պայմանաւորուած այդ բարիքներով, հոգի'ն է այդ Հայրենիքին: Այդ ազատութիւնը կ'ապահովէ ու կը նուիրագործէ աւանդութիւններն ու հոգեկան արժէքները այն բոլոր ցեղերուն, որոնք քաղաքացիներն են այդ Հայրենիքին:

Արդ, դուք Ամերիկացիներ էք որպէս քաղաքացիներ: Բայց ասով չէք դադրիր ըլլալէ անդամները հայ ազգին, որ իր կեդրոնացած անհատականութիւնն ունի Մայր-Հայրենիքին՝ Հայաստանի մէջ: Մերը այդ ազգին հանդէպ ոչ միայն բնական է, այլ նաեւ հրամայական:

Չկայ բան մը, որ կարենայ կտրել ձեր եւ այդ ազգին միջեւ գտնուած ամուր կապը: Չկայ բան մը, որ իրաւունք տայ ձեզի արհամարհելու կամ անտեսելու այդ կապը: Դուք մտքով կոյրեր չէք: Դուք կրնաք եւ պարտաւոր էք ըլլալ այնքան լաւ հայեր, որքան լաւ ամերիկացի-

ներ, այնքան ճշմարիտ հայ ազգասերներ, որքան իրական ամերիկեան քաղաքացիներ:

Ամերիկեան ցեղերու խառնուրդ մըն է, աւելի ճիշտ՝ համադրութիւն մը, կեանքի միեւնոյն պայմաններով ներդաշնակաւորուած: Համադրութիւն մը ձուլում մը չէ: Եւ արդէն ձուլում մը ո՛չ անհրաժեշտ է, ո՛չ ալ օրինաւոր երկրի մը համար, որ օրէնքի միութիւնը չի շփոթեր բնական ազատութիւնները կաշկանդող եւ պէսպիսութեան արժէքը ստորագնահատող միօրինակութեան հետ:

1. Ամերիկեան քաղաքացի, հնազանդ՝ Ամերիկեան օրէնքին, յարգալից՝ աստղազարդ դրօշին, հաշտ՝ երկրին ոգիին հետ, անձնուէր՝ Միացեալ Նահանգաց Հայրենիքին:

2. Յեղով հայ, բարոյապէս եւ բնապէս կապուած հայ ազգային աւանդութիւններուն եւ ապրումներուն, մասնակից՝ հայուն կրօնական դարաւոր փորձառութիւններուն, խանդավառ՝ հայ հայրենիքի բոլոր քաղաքակրթական նուաճումներու հանդէպ.- այս է ՔՈՒ ՎԱՐՔԱ-ԳԻԾԴ, սիրելի հայ երիտասարդ»:

Գարեգին Տրապիզոնցի Պատրիարք, որպէս առաջին Առաջնորդը Գալիֆորնիայի, հետեւեալ խօսքով կ'աւարտէ իր պատգամը, որուն համար անկարելի է պատասխան մը կամ պատշաճ խօսք մը գտնել: Միայն հիացած ենք: Կարդացէք այն եւ ըմբոշխնեցէք: Ահա այսպիսի հոգեւորականներ ենք ունեցած, որոնց արեան մէջ է Հայց. Եկեղեցին իր առաքելութեամբը:

«Վսեմագոյնն ամէն բանի ա՛յն է, որ կը ժպտի անբարբառ ամենէն անմատչելի խորութեան մէջ մարդկային Էութեան: Թանկարժէք են այն զգայութիւններն ու ներշնչումները, որոնք այդ խորութենէն կը ճառագայթեն: Անկեղծութիւնը շնորհալի օծութիւն է այդ բոլորին:

Ինչ որ ըսի որպէս հովիւի մը խորհրդածութիւններն ու թելադրութիւնները իր սիրելի եւ բանաւոր հօտին, աննշան մէկ ծորումն է սրտի մը, ուր ծնծղուն ծա-

ծանուանով մը կը ծաւալի լռութիւնը՝ ժողովուրդին սերէն մագնիսուած լաւագոյն զգացումներու:

Եթէ այդ ծորումը ապահովէ առողջարար արբեցումը «քաղցր ռետին»-ին, «լոյսի ճամբայ» մը բանալով դէպի հոգեւոր-բարոյական եւ կրօնական-ազգային յառաջադիմութիւն մեր սիրելի ժողովուրդին համար,- այս սակաւը հասած կ'ըլլայ իր նպատակին:

Սրտի այդ լոին խորութենէն անխառն սիրոյ ողջոյններով եւ օրհնութիւններով մաղթանքներ ունի մեր եկեղեցւոյն բարեկարգութեան եւ մեր ժողովուրդի հոգենորոգ բարօրութեան համար՝ Գալիֆորնիոյ Հայց. Առաջնորդ Գարեգին Եպս. Տրապիզոնի»:

Խոնարհումով մը այս համեստ աշխատանքը կը ձօնենք հոգեւոյս Գարեգին Տրապիզոնցի Պատրիարքի յիշատակին այն համոզումով, որ սերունդներ պիտի կարդան իր գրչէն բխած հոգեշունչ պատգամներ, որոնք հայ մարդուն կեանքը կը կերպարանափոխեն, որպէսզի մեր քայլերն ուղղենք միշտ դէպի վեր, դէպի լոյս, դէպի Աստուած: